Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՄԻԿՐՈՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱԼՈՒՄՅԱՆ Տ. Զ.
Հ. Թումանյանի անվան Վանաձորի պետական մանկավարժական համալսարան
Տիգրան Մեծն 36
e-mail, t-malumyan@mail.ru

Հոդվածում քննարկվում են ավագ նախադպրոցականների փոխհարաբերությունների բազմաշերտ դրսևորումները՝ առաջին հերթին կապված երեխայի և նրա սոցիալական մերձավոր միջավայրի փոխազդեցությունների տարրապատկերի միասնաբար հանդես գալու պայմանների հետ: Երեխայի ինքնագիտակցությունը պայմանավորող դերեկատարումներն ունեն տարիքային և սեռային բնույթ, որոնցում ներառված են մեծահասակների կողմից ներկայացվող սոցիալական նորմերը, որոնք բնականաբար երեխայի առօրյա կյանքում ունեն հուզական երանգավորումներ, քանի որ հանդես են գալիս որպես համակրանքի կամ հակակրանքի արտահայտություն՝ դրսևորվելով որպես ուրախություն, թախիծ և այլ վիճակներ; Բացահայտվում է հուզական դրսեւորումների գիտական հիմքերը ոչ միայն խաղային գործունեության պայմաններում, այլև «երեխա-երեխա» և «երեխա-մեծահասակ» միջանձնային հարաբերություններում: Հուզական ոլորտի տարիքային փոփոխությունները պայմանավորված են երեխաների հաղորդակցական կարողություններով, միմյանց հանդեպ ունեցած վերաբերմունքով և այն դերակատարմամբ, որոնք ստանձնում է երեխան իր ամենօրյա շփումներում:

Բանալի բառեր. *հուզական ոլորտ, հուզական վիճակներ, գործողություններ, մանկական պատմվածքներ, գիտական հայեցակարգեր, երեխա- երեխա հաղորդակցություն:*

Ներկայացված է խմբագրություն 20.06.2018

Նախադպրոցականի հուզական ոլորտի ձևավորումը, ինչպես հայտնի է, սկսվում է վաղ տարիքից, քանի որ, ըստ էության, արտահայտում է իմացական կամ ճանաչողական վերաբերմունքն այն ամենի հանդեպ, ինչ շրջապատում է իրեն՝ որակական առումով կոնկրետ դրսևորումներ ստանալով կրտսեր (3-4 տարեկան), միջին (4-5 տարեկան) և ավագ նախադպրոցական տարիքում (5-6 տարեկան) [1]: Հատկապես ավագ նախադպրոցական տարիքում շարունակվում են հուզական ոլորտի հետագա զարգացումները [2]: Ակնհայտ է, որ հուզական ոլորտի նպատակամետ զարգացումը պայմանավորված է ինչպես երեխայի նյարդային համակարգի, զգայությունների զարգացման, գլխուղեղի կեղևի կարգավորիչ ֆունկցիայի, պայմանական ռեֆլեքսների առաջացման արագության հետ, այնպես էլ երկրորդ ազդարարային համակարգի՝ խոսքի զարգացմամբ, որոնք բացահայտորեն ցույց են տալիս հույզերի ներքին դետերմինանտների վճռորոշ ազդեցությունը հուզական ընդհանուր ոլորտի զարգացման գործում:

Հարկ է նշել, որ նախադպրոցական տարիքում հուզական ոլորտի զարգացման բովանդակությունն ու ընթացքն էապես տարբերվում են նախորդ տարիքային շրջանի հուզական կյանքի էական ձեռքբերումներից: Միևնույն ժամանակ, հուզական զարգացման արդյունավետությունը նախադպրոցական տարիքում մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչպես է տեղի ունեցել հուզական ոլորտի զարգացման ընթացքի անցումը վաղ մանկությունից դեպի ավագ նախադպրոցական տարիք: Իհարկե, կարելի է ենթադրել, որ հուզական ոլորտի փոփոխությունները կարող են ընթանալ հաջորդականության սկզբունքին համապատասխան, քանի որ վաղ տարիքում նախապատրաստվում են որոշակի նախադրյալներ և ստեղծվում են ավելի կոնկրետ հոգեբանամանկավարժական պայմաններ, որոնք հիմք են հանդիսանում հաջորդ տարիքային շրջանում հուզական լիարժեք զարգացումն ապահովելու համար: Չնայած երեք տարեկանը ճգնաժամային է, այդուհանդերձ, այն էապես չի խոչընդոտում հուզական ոլորտի հետագա զարգացման գործընթացը, քանի որ անհրաժեշտ հոգեբանական պայմանների և ազդեցության միջոցների առկայության դեպքում տարիքային ճգնաժամը կարող է նաև առանց ցնցումների ընթանալ: Անդրադառնալով վաղ տարիքի նորագոյացումներին, կարելի է նկատել հուզական ոլորտի այնպիսի փոփոխություններ, որոնք պայմանավորված են արտաքին աշխարհից եկող գրգռիչերին տարիքին համարժեք արձագանքելու ընդունակությանը, կոնկրետ իրավիճակում որոշակիորեն կողմնորոշվելու կարողությանը, ինքնուրույնությանը և ակնառու-գործնական մտածողությանը: Երեխայի ինքնագիտակցության պարզագույն դրսևորումները հաճախ հանդես են գալիս «ես-ինքս» հայեցակարգում, երբ նկատվում են հուզական դրսևորումներով ինքնասպասարկմանը միտված որոշակի կարողություններ, օրինակ՝ նախադպրոցականը ներքին բավարարվածության զգացում ապրելով ուրախանում է առաջադրանք կատարելիս կամ հակառակը՝ տխրում է, երբ չի կարողանում կամ չի ցանկանում, կատարել այս կամ այն առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ մտավոր կամ առարկայական գործողությունները [3]: Երեխայի հուզական կյանքի էական փոփոխությունները պայմանավորված են սոցիալական զարգացման նոր իրավիճակով, քանի որ նախադպրոցականի գրաված սոցիալական դիրքը միջավայրում որոշակիորեն տարբերվում է այն դիրքից, երբ նա գտնվում է վաղ մանկության տարիքում և առավելապես շփվում է միայն ընտանիքի անդամների հետ: Մինչդեռ նա իր սոցիալական միջավայրում նոր որակներ և տարրական պարտականություններ է ձեռք բերում: Զարգանում են ինչպես «երեխա-մեծահասակ», այնպես էլ «երեխա-երեխա» փոխհարաբերությունները: Այս տարիքը համարվում է երեխայի սոցիալականացման բուռն շրջան:

Նախադպրոցական տարիքում փոխվում և ընդարձակվում են նաև հուզական գործընթացների բովանդակությունն ու կառուցվածքային առանձնահատկություն-ները: Նրանցում ի հայտ են գալիս հույզերի և զգացմունքների նոր և կարևոր դրսևորումներ: Այս առումով հատկապես հարկավոր է առանձնացնել էմպաթիայի (ապրումակցում, կարեկցում) զգացումը, առանց որի բնականաբար հնարավոր չէ երեխաների համատեղ գործունեությունն ու շփումը նախադպրոցական հաստատություններում: Այս տարիքում աստիճանաբար ընդլայնվում է երեխայի սոցիալական շրջապատը: Երեխան մտնում է միջանձնային հարաբերությունների նոր համակարգ, առաջին փորձերն է անում հասակակիցների հետ շփվելու համար, քանի որ նա ընդգրկվում է գործունեության նոր ձևերի մեջ: Առաջանում են նոր՝

հաջողության հասնելու, մրցակցելու և այլ դրդապատճառներ, որոնք առավելագույնս բնորոշ են հատկապես ավագ նախադպրոցականներին:

Նախադպրոցականը սկսում է յուրացնել միկրոմիջավայրում ընդունված վարքի նոր նորմերը: Նա աստիճանաբար սովորում է գնահատել ոչ միայն իր, այլև ուրիշների արարքները՝ բարոյական տեսանկյունից, ենթարկում է իր վարքն այդ նորմերին: Սկզբում երեխան կարողանում է գնահատել իր մերձակա միջավայրում ընդգրկված մարդկանց արարքները՝ երբեմն չկարողանալով գնահատել սեփականը: Նախադպրոցական մանկության տևական փուլում երեխան ձեռք է բերում սեփական արարքները գնահատելու կարողություն՝ աշխատելով վարվել իր կողմից յուրացված նորմերին համապատասխան: Երեխան հասակակիցների հետ շփվելիս սկսում է պահպանել որոշակի էթիկական նորմեր, չնայած, որ այն երբեմն կարող է ընտրողական բնույթ կրել՝ կախված դիմացինի նկատմամբ ունեցած վերաբերմունքից (համակրանք, հակակրանք և այլն):

Անձնավորության ձևավորումը հատկապես միկրոմիջավայրի ազդեցության պայմաններում չի կարող դիտարկվել առանց հասարակական միջավայրի կողմից տրված գնահատականի, քանի որ երեխան ապրում է միջանձնային փոխհարաբերությունների լայն ցանցում՝ նկատի ունենալով, որ նա այս կամ այն չափով ներառված է տարաբնույթ գործընթացներում: Բոլոր դեպքերում միջանձնային հարաբերությունների համակարգի ազդեցությունը իմացական և հուզական առումներով բավականին բարդ և երկարատև գործընթաց է: Երևույթի դետերմինացիան արտահայտվում է ինչպես մարդու անհատական որակներում, նրա հուզական և կամային առանձնահատկություններում, ինտելեկտուալ հնարավորություններում, այնպես էլ նախադպրոցականի կողմից ընդունված նորմերի և արժեքների յուրացման գործընթացում, որոնք, իրոք, արգասիք են միկրո և մակրոմիջավայրերի համաժամանակյա ազդեցության: Նախադպրոցականների միջանձնային հարաբերությունների համակարգում թերևս որպես կարևորագույն օղակներ կարելի է առանձնացնել նրա ակտիվությունն ու ճանաչողական գործունեությունը: Նախադպրոցական հաստատություններում կամ դպրոցներում երեխան մտնելով տարբեր տիպի, կառուցվածքի, արժեքի ու բովանդակության մարդկային փոխհարաբերությունների մեջ՝ հանդես է գալիս որպես անհատականություն, որով հնարավորություն է ընձեռնվում մշտադիտարկելու և գնահատելու իր արարքները և գործողությունները ուրիշների հետ փոխհարաբերություններում: Երեխան ապրում, մեծանում և զարգանում է տարաբնույթ կապերի ու հարաբերությունների համադրման պայմաններում: Չնայած այն իրողությանը, որ միջանձնային փոխհարաբերությունների դրսևորումները յուրաքանչյուր կոնկրետ խմբում ունեն իրենց անկրկնելի պատմությունը, այդուհանդերձ, տարիքային տարբեր փուլերում գործում են դրանց ձևավորման ու զարգացման ընդհանուր օրինաչափություններ: Ցանկացած տարիքային զարգացման մակարդակի վրա գտնվող նախադպրոցականների խումբն ընդհանուր առմամբ բնութագրվում է իր սոցիալական զարգացման հատուկ կարգավիճակով: Այս առումով տեղին է վկայակոչել Լ. Ս. Վիգոտսկու կողմից ներմուծված «Սոցիալական իրավիճակի զարգացում» հասկացողությունը, քանի որ այն դիտարկվում է որպես տվյալ խմբի օբյեկտիվ գոյության պայման: Բացի դրանից, կարելի է առանձնացնել երեխաների խմբերում սոցիալական իրավիճակների զարգացման մյուս պայմանը՝ օբյեկտիվ սոցիալական կարգավիճակը, այն դեպքում, երբ որոշիչ է դառնում, թե ինչպիսի տեղ է զբաղեցնում մանկությունը որպես

որոշակի սոցիալական, տարիքային կատեգորիա: Սոցիալական կարգավիճակի զարգացման վերլուծությունը թույլ է տալիս պարզելու միջանձնային հարաբերությունների բովանդակությունը երեխաների տարբեր տարիքային խմբերում: Մանկական և դեռահասների խմբերում կարելի է առանձնացնել ֆունկցիոնալ (դերային), էմոցիոնալ (գնահատման) և անձնային (իմաստային) հարաբերություններ հասակակիցների միջև:

«Հուզական-գնահատող» հարաբերությունների առնչությամբ կարելի է փաստել, որ դրանք ի հայտ են գալիս երեխաների անմիջական փոխներգործության պայմաններում՝ արտացոլելով նաև նրանց նախասիրությունների համակարգի առանձնահատկությունները [4]: Նմանատիպ հարաբերությունների մասին նախնական և հետագայում խորացող գիտելիքները հնարավորություն կտան բացահայտելու երեխաների պահվածքի, արարքների, վարքագծի հետ կապված շատ հարցեր, որոնք կենսական նշանակություն ունեն երեխաների հետ կազմակերպվող ուսումնադաստիարակչական գործընթացն արդյունավետ կառավարելու համար: Ահա թե ինչու առաջին պլան են մղվում այնպիսի հուզական նախասիրությունները՝ ինչպիսիք են համակրանքը, ընկերական նախընտրությունը և այլն: Այս իմաստով ստորև կանգ առնենք նախադպրոցական աղջիկ և տղա երեխաների փոխհարաբերությունների վրա, նկատի ունենալով, որ նախադպրոցականների շփման մեջ առանձնահատուկ տեղ է գրավում տղաների և աղջիկների փոխհարաբերությունները: Արդեն վաղ տարիքի երեխան ձեռք է բերում որոշակի գիտելիքներ, առաջին հերթին իր սեռային պատկանելիության մասին, որը դեռևս ամբողջությամբ չի գիտակցվում երեխայի կողմից, թե դա ինչ բովանդակություն ունի և նույնիսկ, թե ինչպես են տարանջատվում «աղջիկ» և «տղա» սեռերը: Միշտ չէ, որ մեծահասակները գիտակցում են նախադպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունները, քանի որ հաճախ գիտակցաբար, թե անգիտակցաբար շարունակում են երեխային սովորեցնել, թե նա ինչպես պետք է իրեն պահի տարբեր մարդկանց շրջապատում և ինչ պարտավորություններ ունի իր սեռային դերի գիտակցման հետ կապված: Արդյունքում տղաներին սովորաբար թույլ են տալիս ավելի համարձակ, երբեմն նաեւ «ագրեսիվ» լինել, ավելորդ անգամ խրախուսում են նրանց ֆիզիկական ակտիվության ցուցաբերումը, իսկ աղջիկներից սպասում են հուզականություն և բարձր զգայունակություն, որը երբեմն հանգեցնում է ամոթխածության կամ ավելորդ համեստության: Նախադպրոցականն իր ամենօրյա շփումներում առավելապես բացահայտում է կանանց և տղամարդկանց արտաքին տարբերությունները՝ ըստ հագուստի և վարքագծի: Երեխաներն ընդօրինակում են գրեթե ամեն ինչ, հատկապես պահվածքը, որն ընդունելի է շրջապատի համար և համապատասխանում է մեծահասակների վարքային ստերիոտիպներին, չնայած, երբեմն, դրանք դիտարկվում են որպես բացասական սոցիալական սովորույթներ (օրինակ՝ երբեմն նաև ծխախոտ ու ալկոհոլ օգտագործելը): Իհարկե, տղաները մեխանիկորեն չեն օգտագործում այդ ամենն իրենց առօրյայում (բացառությամբ առանձին դեպքերի), բայց և այնպես սկսում են ներմուծել դրանք իրենց սյուժետադերային խաղերում ևս:

«Ես»-ի գիտակցումը ներառում է սեփական սեռային պատկանելություն, որը նախադպրոցական տարիքի երեխաների վարքագծում արդեն դառնում է գերակա: Սեփական «Ես»-ի գիտակցման պարագայում տղաներն ու աղջիկներն ընտրում են համապատասխան դերեր՝ ընդգրկելով դրանք սյուժետադերային խաղերի բովանդակության մեջ, որոնցով էլ պարզ է դառնում, թե երեխաներն ինչպես են

խաղերում և ամենօրյա շփման պայմաններում աստիճանաբար յուրացնում ինչպես հասակակիցների և տարբեր սեռերի հետ կապված սոցիալական դերերը, այնպես էլ տղամարդկանց ու կանաց, աղջիկների ու տղաների շփման ձևերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՈՒՆ

1. Гребенюк О. С., Гребенюк Т. Б. Основы педагогики индивидуальности: Учеб. пособие/ Калининград ун-т.- Калининград, 2000, 572с.
2. Доронова Т. Н. Изобразительная деятельность и эстетическое развитие дошкольников: методическое пособие для воспитателей дошкольных образовательных учреждений. М., Просвещение, 2008, 189с
3. Дружинин В. Е. Психология эмоций, чувств, воли. М., Творческий центр Сфера, 2003, 95с
4. Стародубцева С. Г. Развитие эмоциональной сферы детей старшего дошкольного возраста в процессе изобразительной деятельности // Молодой ученый. -2015, №6.- С. 689-692. URL https://moluch.ru/archive/86/16442/ (дата обращения: 19.03.2018).

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ВЗАИМООБУСЛОВЛЕННОСТИ ОТНОШЕНИЙ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА И ОКРУЖАЮЩЕЙ ИХ МИКРОСРЕДЫ

Т.З.Малумян

В статье обсуждается многоуровневость межличностных отношений детей старшего дошкольного возраста, обусловленная взаимовлиянием микросреды и ребенка, при условии совместной деятельности. Социальные роли имеют возрастную и гендерную окраску и обусловливают самосознание ребенка. В этот процесс включены нормы поведения со стороны взрослых, которые имеют эмоциональную окраску и проявляются в виде симпатий и антипатий, эмоциями радости, гнева, грусти и т.д. Возрастные перемены эмоциональной сферы обусловлены коммуникативными умениями детей, отношением друг к другу и теми ролями, которые выполняет ребенок в повседневных интеракциях.

SUMMARY

FEATURES OF INTERCONDITIONALITY OF THE RELATIONS OF CHILDREN OF PRESCHOOL AGE AND THE MICROENVIRONMENT SURROUNDING THEM

T.Z. Malumyan

In article the multilevelness of the interpersonal relations of children of the advanced preschool age caused by interference of a microenvironment and the child on condition of joint activity is discussed. Social roles have age and gender coloring and cause consciousness of the child. This process has included standards of behavior from adults who have emotional coloring and are shown in the form of likes and dislikes, emotions of joy, anger, grief, etc. Age changes of the emotional sphere are caused by communicative abilities of children, the relation to each other and those roles which are carried out by the child in daily interactions.